ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՇ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/96

«8» « 11 » 2019թ.

ք.Երևան

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը», ի դեմս **Արթուր Սողոմոնյանի**, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ՆԱԻՐԻ ՇԻՆ» ՍՊԸ-**ն, ի դեմս տնօրեն պարոն **Ս.Զաքարյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում /առանց տանիքի/»** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքներն սկսվում են Կողմերի միջև կնքվող ֆինանսական միջոցների առկայության մասին լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 70 օր:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք՝ համաձայն Հավելված 6-ի.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ,

ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքներընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **24,589,400 (քսանչորս միլիոն հինգ հարյուր ութսունինը հազար չորս հարյուր) ՀՀ դրամ**: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն եվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[33] .

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգհարյուրերորդական) տոկոսիչափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսիչափով[34] : Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգհարյուրերորդական) տոկոսիչափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերին (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերիս տորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

---

[34] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրտանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են: Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ՝ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 23 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N1, N2, N3, N4, N4.1, N5 և N6 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է

համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	«Նաիրիշին» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցեն՝ ՀՀ, ք.Մարտունի փ. Մյասնիկյան տ.115
ՀՎՀՀ 00846441	Հ/Հ 2476603631740000
Հ/Հ՝ 900018001231	ՀՎՀՀ 08419076
Կենտրոնական գանձապետարան	«Արդշինբանկ» ՓԲԸ Մարտունու մասնաճյուղ
Գործադիր տնօրեն Արթուր Սողոմոնյան	Գործադիր տնօրեն Սասուն Զաքարյան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 2
«8» «11» 2019 թ. կնքված
ՀՄ-ԳՀ-ԱՇՀԲ-2019/96 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ *
«ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում՝ առանց տանիքի »
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ՀՀ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը (հազ. դրամ) Ներառած բոլոր %-ը
1	2	3	4	5	6
	1-1. Ընդհանուր շինարարական աշխատանքներ				
	Ներքին ապամոնտաժման և քանդմանաշխատանքներ				
1	Առկա ջեռուցման մարտկոցների ապամոնտաժում (վերատեղադրման նպատակով)	կ-տ	0	1.44	0.00
2	Առկա փայտե դռների ապամոնտաժում շեպերի քանդումով	մ^2	0.00	0.68	0.00
3	Առկա փայտե պատուհանների,պատուհանագոգերի ապամոնտաժում շեպերի քանդումով	մ^2	0.0	1.01	0.00
4	Առկա մետ/պլաստե դռների ապամոնտաժում շեպերի քանդումով (վերատեղադրման նպատակով)	մ^2	0.00	0.68	0.00
5	Մետաղապլաստե ապամոնտաժված դռների վերատեղադրում	մ^2	6.48	3.96	25.69
6	Միջնորմային պատերի քանդում δ=100մմ	մ^2	0.0	0.93	0.00
7	Միջնորմային պատերի քանդում δ=200մմ	մ^3	0.0	9.21	0.00
8	Քարե պատերի քանդում 40սմ հաստության	մ^3	0.0	9.21	0.00
9	Մետաղական ճաղաշարի ապամոնտաժում 31,2մ,h=90սմ	մ^2	0.00	4.83	0.00
10	Պլաստիկե կախովի առաստաղի քանդում	մ^2	0.0	0.92	0.00
11	Աստիճանավանդակի բազրիքի ապամոնտաժում	մ	0.0	0.53	0.00
12	Մետաղական խողովակների ապամոնտաժում Φ50	մ	0.0	0.37	0.00
13	Մետաղական թիթեղի ապամոնտաժում	մ^2	0.0	0.11	0.00

14	Առաստաղի գաջի քսահարթման քանդում	մ^2	146.0	0.31	44.73
15	Առաստաղի մաքրում առկա յուղաներկից	մ^2	95.0	0.16	14.95
16	Պատերի գաջի սվաղի քանդում	մ^2	135.0	0.85	115.22
17	Պատերի մաքրում առկա յուղաներկից	մ^2	185.0	0.11	21.18
18	Հախճասալի քանդում սվաղի հետ միասին	մ^2	0.0	0.44	0.00
19	Խեցեսալե հատակի քանդում	մ^2	0.0	0.49	0.00
20	Փայտետաշեղային սալերի քանդում	մ^2	0.0	0.54	0.00
21	Մանրահատակի քանդում	մ^2	0.0	0.62	0.00
22	Տախտակե հատակի քանդում	մ^2	0.0	0.54	0.00
23	Բետոնե հարթակի քանդում	մ^3	0.0	18.96	0.00
24	Շին աղբի բարձում և տեղափոխում 12կմ հեռավորության վրա	մ^3	26.0	2.20	57.20
	Ընդամենը			0.00	*279.0*
Բացվածքների իրականացում				0	
1	Պատի երկու կողմից բարավորի նիշի վրա բացել երկայնական ճեղքեր	100մ	0.10	67.15	6.71
2	Անցքերի շաղափում պատերի մեջ Φ16	100 հատ	0.34	28.98	9.85
3	Մետաղական տարրերի տեղադրում	տն	0.124	541.49	67.18
4	Բացվածքների սվաղում ց/ավազային շաղախով 25մմ հաստության	մ^2	6.6	3.19	21.05
5	Մետաղական ցանցի տեղադրում 150x150 3Br-I	մ^2	6.6	0.76	5.05
6	Միաձույլ ե/բետոնե միջուկի կառուցում B15 դասի բետոնով	մ^3	2.52	113.58	286.21
7	Ամրան Φ12A500 c դասի	կգ	301.14	0.52	156.20
8	Ամրան Φ6A cI դասի	կգ	52.92	0.53	27.87
9	Անցքերի շաղափում պատերի մեջ Φ16	100 հատ	1.12	28.98	32.46
10	Միաձույլ ե/բետոնե բարավորների կառուցում B20մակնիշի բետոնով	մ^3	1.92	103.46	198.64
11	Ամրան Φ12A500 c դասի	կգ	102.40	0.51	52.63
12	Ամրան Φ6A cI դասի	կգ	34.16	0.53	17.99
13	Մետաղական ցանցի 8-1 (Φ6AI) տեղադրում միջնորմների ամրակցման համար	տ	0.113	592.47	67.23
	Ընդամենը	*հազ. դր.*		0.00	*949.1*
	Միջնորմների ամրացում			0	

1	Անցքերի շաղափում Φ16մմ L=100մմ	100 հատ	0.79	15.33	12.11
2	Φ12A500c դասի ամրանի տեղադրում միջնորմների ամրակցման համար	տ	0.18	626.18	110.21
3	Φ6Acl դասի ամրանի տեղադրում միջնորմների ամրակցման համար	տ	0.01	634.15	6.34
4	Մետաղական ցանցի Տ-2 (Φ6AI) տեղադրում միջնորմների ամրակցման համար	տ	0.021	592.47	12.44
5	Խարամաբլոկների ամրանավորված անցքերի մեջ ցեմենտավազային շաղախի լցում M50 մակնիշի	$մ^3$	5.6	42.89	240.16
6	Խծուծ	կգ	25.5	1.91	48.78
7	Միաձույլ ե/բետոնե բարավորների և սեյսմիկ գոտու կառուցում B15 մակնիշիբետոնով	$մ^3$	3.36	93.99	315.80
8	Ամրան Φ12A500 c դասի	կգ	153.08	0.51	78.67
9	Ամրան Φ6A cl դասի	կգ	107.80	0.53	56.78
	Ընդամենը			0.00	*881.3*

Հատակներ 0

1	Խարամաբետոնե շերտի իրականացում h=150մմ B10 դասի	$մ^3$	2.3	43.88	100.91
2	Ցեմ/ավազային հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստության, M150 մակնիշի շաղախով	$մ^2$	478.4	1.56	746.21
3	Ջրամեկուսիչ շերտի պատրաստում բիտումի մաստիկա 2 շերտ	$մ^2$	213.7	2.35	503.06
4	Կեռամոգրանիտե սալերով հատակի իրականացում ամրացված համապատասխան սոսնձով՝ չսահող d=6մմ	$մ^2$	106.7	13.10	1397.16
5	Լամինատե մանրահատակների իրականացում d=8մմ (պարալոնի շերտի և շրիշակի տեղադրումով)	$մ^2$	311.1	5.42	1685.95
6	Խեցեգործական սալիկներ 10մմ ամրանացված սոսնձով	$մ^2$	60.65	7.44	451.18
	Ընդամենը			0.00	*4884.5*

Սան. հանգույցի լամինացված միջնորմ 0

1	Երկկողմանի լամինատի տեղադրում δ=16.6մմ	$մ^2$	21.0	4.63	97.24
2	Ալյումինե պրոֆիլ	մ	98.7	0.46	45.31
3	Ծխնի	հատ	18.0	0.77	13.77
4	Բռնակ	հատ	9.0	0.46	4.13
5	Մետաղական տարրերի տեղադրում	տ	0.082	502.16	41.05

	Ընդամենը			0.00	*201.5*
Ներքին հարդարման աշխատանքներ				0	
1	Առաստաղների քսահարթում գաջի շաղախով	մ^2	79.0	1.25	99.08
2	Առաստաղի սվաղի ծեփամածկում և ներկում երկշերտ լատեքսային ներկով	մ^2	479.0	1.22	582.05
3	Պլաստիկ կախովի առաստաղի իրականացում,մետաղական պրոֆիլի վրա	մ^2	50.0	2.94	147.03
4	Պատերի սվաղում գաջի շաղախով	մ^2	85.0	2.51	213.16
5	Պատերի ծեփամածկում և ներկում ակրիլային ներկով	մ^2	142.0	1.08	152.93
6	Պատերի ծեփամածկում և ներկում լատեքսային ներկով	մ^2	860.0	1.08	926.19
7	Պատերի ցեմ/ավազային սվաղ	մ^2	62.0	1.97	122.02
8	Ցեմ/ավազային սվաղ պատերի կեռամիկական հախճսալիկների տակ	մ^2	67.0	1.97	131.86
9	Պատերի երեսապատում կեռամիկական հախճսալիկներով ,ամրացված սոսնձով	մ^2	84.0	6.89	578.77
	Ընդամենը			0.00	*2953.1*
Վիտրաժներ, դռներ, պատուհաններ				0	
1	Մետաղապլաստե վիտրաժներ, երկշերտ ապակեփաթեթով, 60մմ հաստ., 4 խցիկով, բացվող	մ^2	15.12	41.75	631.29
2	Նույնը՝ չբացվող	մ^2	10.97	21.57	236.59
3	Ներքին մետաղապլաստե դռներ, երկշերտ ապակեփաթեթով , 60մմ հաստությամբ, 4 խցիկով, սպիտակ	մ^2	27.16	41.75	1133.98
4	Նույնը՝ չբացվող	մ^2	3.87	21.57	83.47
5	Մետաղապլաստե պատուհաններ , երկշերտ ապակեփաթեթով, 60մմ հաստությամբ, 4 խցիկով, բացվող	մ^2	25.80	32.63	841.78
6	Նույնը՝ չբացվող	մ^2	22.56	21.57	486.56
7	Պլաստիկ պատուհանագոգերի արժեք b= 0,35մ արժեքը	մ	176.7	4.57	807.43
8	Պատուհաններին ցանցի տեղադրում	մ^2	28.32	6.64	187.93
9	Հանքային բամբակի տեղադրում 5.5մ^2	մ^3	0.22	33.55	7.38
10	Պատուհանագոգերը և շեպերը սվաղել ցեմենտավազային շաղախով	մ^2	40.5	2.82	114.02
	Ընդամենը			0.00	*4530.4*
Ներքին շին. աշխատանքներ				0	
1	Խարամաբետոնե սալիկով միջնորմների կառուցում և բացվածքի շարում 100 մմ հաստությամբ	մ^2	27.7	4.13	114.31

2	Խարամաբետոնե սալիկով միջնորմների կառուցում և բացվածքի շարում 200 մմ հաստությամբ	մ^3	1.9	25.06	47.61
3	Պատշգամբի և բացվածքի շարում երկտակ ուղիղ շարվածքի տուֆ քարերով b=400մմ	մ^3	43.0	23.96	1030.38
4	Պատուհանների տակ շարում մեկ տակ ուղիղ շարվածքի տուֆ քարերով b=200մմ	մ^3	4.0	23.96	95.85
5	Կեռամոգրանիտե շրիշակների կառուցում ամրանավորված սոսնձով h=10սմ L=106,7մ	մ^2	10.7	11.73	125.21
6	Խեցեգործական սալիկներից շրիշակների կառուցում ամրանավորված սոսնձով h=10սմ L=16,0մ	մ^2	1.6	11.73	18.78
7	Պլաստիկե շրիշակներ h=7սմ	մ	195.0	1.08	211.49
8	Նոր տեղադրվող պատուհանների և դռների շեպերի սվաղումը գաջի շաղախով	100մ^2	0.91	605.40	550.91
9	Շեպերի սվաղի ծեփամածկում և ներկում լավորակ լատեքսային ներկով	100մ^2	1.00	107.70	107.70
10	Սան.տեխնիկական և օդափոխության խողովակների փակում խոնավադիմացկուն գիպսաստվարաթղթով d=12.5մմ	մ^2	3.6	3.31	11.91
11	Ուղղորդող պրոֆիլ թերմոսալիկ UW 50x40	գմ	6.0	0.31	1.84
12	Հենակի պրոֆիլ CW 50x50	գմ	9.3	0.38	3.56
13	ջերմամեկուսացում պեռլիտե սալերով 10սմ հաստության	մ^2	65.0	10.61	689.43
14	Մետաղական ցանցի տեղադրում, Φ3Вр-I բ.50x50	մ^2	65.0	1.19	77.49
15	Պոլիէթիլենային թաղանթի փռում	մ^2	65.0	2.00	129.95
16	Երկրորդ հարկի ննջասենյակի առաստաղը փակել խոնավադիմացկուն գիպսաստվարաթղթով d=12.5մմ	մ^2	65.0	3.31	215.11
17	Ուղղորդող պրոֆիլ թերմոսալիկ UW 50x40	գմ	305.0	0.31	93.35
18	Հենակի պրոֆիլ CW 50x50	գմ	47.5	0.38	18.17
19	Աստիճանների երեսապատում արհեստական գրանիտե սալիկներով d=30մմ	մ^2	23.0	14.43	331.78
20	Աստիճանների անկյունային մասերում ալյումինե պրոֆիլների տեղադրում	գմ	33.0	0.77	25.25
21	Արհեստական գրանիտե շրիշակների կառուցում ամրացված սոսնձով h=100մմ L=20,0մ	մ^2	2.0	11.71	23.42

22	Որմնախարիսխի պատերի երեսապատում 30մմ հաստության բազալտե սալիկներով	մ^2	63.0	27.26	1717.62
23	Մետաղական ցանցի տեղադրում տուֆե որմնախարիսխի երեսապատման համար Փ3Բp-I բ.150x150	մ^2	63.0	0.76	48.07
24	Արտաքին բացվածքների շուրջն իրականացնել երիզող շրջանակներ ցեմենտավազային շաղախով 3 սմ հաստության	մ^2	68.0	2.16	147.20
25	Նույնի ներկում գերկայուն ճակատային ներկով ,ծեփամածկումով	100մ^2	0.680	112.21	76.30
26	Ճակատների խոհանոցային մասնաշենքը ներառյալ սվաղում ցեմենտավազային շաղախով 3 սմ հաստության	մ^2	490.0	2.16	1060.72
27	Մետաղական ցանցի տեղադրում,ցեմ.ավազային սվաղի տակ Փ3Բp-I բ.150x150	մ^2	490.0	0.76	373.02
28	Նույնի ներկում գերկայուն ճակատային ներկով ,ծեփամածկումով	100մ^2	5.65	112.21	633.96
29	Արտաքին փայտամածի կառուցում և քանդում	100մ^2	0.42	95.32	40.03
	Ընդամենը			0.00	*8020.4*

Մետաղական հակահրդեհային աստիճան և բազրիք -2 հատ 0

1	Մետաղական աստիճան, տեղադրումով	տ	2.179	781.19	1702.47
2	Մետաղական աստիճանի երկշերտ յուղաներկում	մ^2	40.0	1.26	50.45
3	Մետաղական աստիճանների ամրացումև բետոնեթափի B15 դասի բետոնով	մ^3	1.24	48.85	60.58
	Ընդամենը			0.00	*1813.5*

Բազրիք 0

1	Աստիճանների վրա տեղադրել նոր ճաղաշար և բռնածող ալյումինե խողովակներից h=900մմ	մ	13.4	15.30	205.06
2	Աստիճանաբազուկների շվելերի հեծանների երկշերտ յուղաներկում հակակոռոզիոն ներկով	մ^2	16.0	1.26	20.18
	Ընդամենը			0.00	*225.2*

Հովար - 2հատ 0

1	Հովարների մետաղական տարրերի տեղադրում	կգ	181.72	0.58	105.07
2	Հովարի ծածկույթ տրամատավոր ցինկապատ թիթեղով d=0.55մմ հաստության	մ^2	12.2	5.99	73.13

3	Հովարի մետաղական տարրերի երկտակ յուղաներկում	մ^2	5.0	1.25	6.27
	Ընդամենը			0.00	*184.5*
	Ամբողջը			0	*24922.4*
	1-2. Ներքին կոյուղու համակարգ			**0**	
1	Պոլիէթիլենային կոյուղու խողովակ de110, ռետինե սեղմիչ օղակներով, փորձարկումով	մ	15.0	3.14	47.11
2	Պոլիէթիլենային կոյուղու խողովակ de50, ռետինե սեղմիչ օղակներով, փորձարկումով	մ	31.0	1.84	57.06
3	Պոլիէթիլենային խողովակների ձևավոր մասեր de50	հատ	23	3.10	71.33
4	Պոլիէթիլենային խողովակների ձևավոր մասեր de110	հատ	7	3.87	27.07
5	Մաքրիչ de100	հատ	3	5.40	16.19
6	Մանկական ուղղանկյուն խեցե լվացարան, շշաձև սիֆոնով	կոմպլ.	7	19.41	135.88
7	Մանկական ուղղանկյուն խեցե լվացարան, շշաձև սիֆոնով՝ միայն տեղադրում	կոմպլ.	2	2.54	5.07
8	Մանկական զուգարանակոնք, թեք թողարկով ցածր տեղակայքով լվացման տակառիկով	կոմպլ.	7	19.03	133.22
9	Մանկական զուգարանակոնք, թեք թողարկով ցածր տեղակայքով լվացման տակառիկով՝ միայն տեղադրում	կոմպլ.	2	3.73	7.46
10	Երկտեղանոց խոհանոցակոնք սիֆոնով	կոմպլ.	2	25.48	50.96
11	Երկտեղանոց խոհանոցակոնք սիֆոնով՝ միայն տեղադրում	կոմպլ.	1	4.35	4.35
12	Խեցե լվացարան, շշաձև սիֆոնով	կոմպլ.	1	19.41	19.41
13	Ալյումինե հոսակ d=50մմ, տեղադրումով	հատ	4	2.32	9.29
	Ապամոնտաժման աշխատանքներ			0.00	0.00
1	Խոհանոցակոնքերի ապամոնտաժում	հատ	0	1.08	0.00
2	Լվացարանների ապամոնտաժում	հատ	0	0.54	0.00
3	Զուգարանակոնքերի ապամոնտաժում	հատ	0	0.67	0.00
4	Թուջե խողովակների de50-de100 ապամոնտաժում	մ	0.0	0.33	0.00
5	Պողպատե խողովակների Φ20 - Φ32 ապամոնտաժում	մ	0.0	0.49	0.00
	Ընդամենը 1-2 մասի			0.00	**584.4**
	1-3. Ներքին սառը և տաք ջրամատակարարման համակարգ			**0**	

1	Պոլիպրոպիլենե խողովակ Φ25, PN16, փորձարկումով, աղտահանումով, լվացումով, մոնտաժումով , ձևավոր մասերի մոնտաժումով	մ	20.0	3.03	60.50
2	Պոլիպրոպիլենե խողովակ Φ20, PN16, փորձարկումով, աղտահանումով, լվացումով, մոնտաժումով , ձևավոր մասերի մոնտաժումով	մ	50.0	3.26	162.92
3	Պոլիպրոպիլենային խողովակների ձևավոր մասերի արժեքը de20,de32	հատ	40	0.07	2.75
4	Փական d=20մմ	հատ	1	5.06	5.06
5	Փական d=15մմ	հատ	36	4.55	163.65
6	Ճկուն խողովակ զուգարանակոնքի լվացման տակառիկի համար Φ15, L=0.5մ	հատ	9	2.30	20.66
7	Լվացարանի ծորակ, խառնարանով	հատ	9	6.89	62.02
8	Լվացարանի ծորակ	հատ	1	3.62	3.62
9	Խողովակների ռետինե ջերմամեկուսացում Φ20	մ	102.0	0.31	31.47
10	Խողովակների ռետինե ջերմամեկուսացում Φ25	մ	40.0	0.39	15.40
	Ընդամենը 1-3 մասի			*0.0*	**528.0**
	1-4. Ջեռուցման համակարգ			**0**	
1	Ալյումինե լավորակ ջեռուցման սարքեր տեղադրումով 0.12կՎտ H=0.5մ, ΔT=50 (88 սեկցիա)	էքմ	24.6	0.76	18.79
2	Ալյումինե լավորակ մարտկոցների արժեքը	սեկցիա	88	6.07	534.22
3	Առկա ջեռուցման մարտկոցների ապամոնտաժում և վերատեղադրում	կ-տ	27	1.08	29.29
4	Պոլիպրոպիլենե խողովակ ալյումինե շերտով տաք ջրի համար PN20 Φ32, փորձարկումով	մ	15.0	3.10	46.56
5	Պոլիպրոպիլենե խողովակ ալյումինե շերտով տաք ջրի համար PN20 Φ25, փորձարկումով	մ	205.0	3.03	620.17
6	Պոլիպրոպիլենե խողովակ ալյումինե շերտով տաք ջրի համար PN20 Φ20, փորձարկումով	մ	190.0	3.26	619.10
7	Ջեռուցիչների վերևի փական Φ15մմ	հատ	35	5.14	179.94
8	Ջեռուցիչների ներքևի փական Φ15մմ	հատ	35	5.10	178.44
9	Ջեռուցիչների օդահանիչ փական Φ15	հատ	35	0.37	13.07
10	Ջեռուցման սարքերի մնտաժային կոմպլեկտ	հատ	35	1.53	53.56
11	Դատարկման փական Φ20	հատ	4	5.06	20.22
12	Գնդային փական Φ20	հատ	4	5.56	22.26

13	Անցքերի բացում միջհարկային ծածկերի մեջ 0.15x0.15	1 անցք	2	4.24	8.48
14	Անցքերի փակում միջհարկային ծածկերում	մ^3	0.01	115.79	1.62
15	Անցքերի բացում պատերում և միջնորմներում 0.15x0.15	1 անցք	18	3.09	55.59
16	Անցքերի փակում պատերի մեջ	մ^3	0.1	140.94	17.19
17	Մետաղական խողովակից պատյան Φ50 ℓ=0.4մ (30հատ)	մ	12.0	2.00	24.00
18	Խողովակների ամրակապիչներ, տեղադրումով	հատ	308	0.02	4.71
19	Պոլիպրոպիլենե խողովակների ձևավոր մասեր Φ20-Φ32	հատ	235	0.23	53.94
20	Օդափոխության ճաղաշար 150x150	հատ	22	3.55	78.06
	Ընդամենը 1-4 մասի			*0.0*	2579.2
	1-5. էլեկտրական լուսավորություն, սարքավորումներ			**0**	
1	Լուսավորության վահանակ դռնակով (12 մոդուլի համար)	լրակ.	2	27.72	55.43
2	Ավտոմատ անջատիչ 380Վ, 40Ա	հատ	2	4.83	9.65
3	Ավտոմատ անջատիչ 220Վ, 16Ա	հատ	3	4.32	12.95
4	Ավտոմատ անջատիչ 220Վ, 25Ա	հատ	11	4.32	47.49
5	Ավտոմատ անջատիչ 220Վ, 40Ա	հատ	1	4.44	4.44
6	Լուսատու LED լամպով 220Վ, 36Վտ 600x600մմ	լրակ.	28	5.08	142.33
7	Լուսատու LED լամպով 220Վ, 18Վտ 300x300մմ	լրակ.	34	3.86	131.20
8	Լուսատու ցայտանթափանց LED լամպով 220Վ, 12Վտ, IP54 սանհանգույցի	լրակ.	18	5.39	97.00
9	Լուսատու ցայտանթափանց LED լամպով 220Վ, 18Վտ, IP54	լրակ.	4	6.15	24.62
10	Հաղորդալար պղնձե,մեկուսացված, բաժանիչ հիմքով, ՊՊՎ 3x6մմ^2	մ	20.0	0.67	13.40
11	Հաղորդալար պղնձե,մեկուսացված, բաժանիչ հիմքով, ՊՊՎ 3x4մմ^2	մ	150.0	0.56	84.12
12	Հաղորդալար պղնձե,մեկուսացված, բաժանիչ հիմքով, ՊՊՎ3x2,5մմ^2	մ	100.0	0.46	45.78
13	Անջատիչ միատակ 220Վ,6Ա	հատ	14	1.57	21.95
14	Անջատիչ երկտակ 220Վ,6Ա	հատ	12	1.81	21.75

15	Երկբևեռ խրոցակային վարդակ, հողանցման հպակով , 220Վ, 6Ա	հատ	47	1.26	59.33
16	Երկբևեռ խրոցակային վարդակ, հողանցման հպակով , 220Վ, 10Ա	հատ	4	1.26	5.05
17	Ճյուղավորիչ տուփ	հատ	10	0.26	2.56
18	Տուփ անջատիչների, խրոցակային վարդակների տեղադրման համար	հատ	13	0.19	2.49
19	Երկաթակապ	100 հատ	20.0	1.53	30.61
20	100մմ և 200մմ հաստության միջնորմի մեջ անցքի բացում	տեղ	10	5.38	53.83
21	Անցքերի փակում միջնորմներում B15 դասի բետոնով	$մ^3$	0.02	223.87	4.48
	սարքավորումներ			0.00	0.00
1	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված հատվածքը 5x6մմ^{2}ВВГ	մ	6.0	2.82	16.95
2	Պոլիէթիլենային էլեկտրատեխնիկական գոֆրե խողովակ Φ32	մ	6.0	0.52	3.13
3	Միջհարկային ծածկերի մեջ անցքերի բացում 100x100մմ	տեղ	1	1.52	1.52
4	Անցքերի փակում միջհարկային ծածկերի մեջ B15 դասի բետոնով	$մ^3$	0.003	293.35	0.88
5	Երկաթակապ	100 հատ	0.15	1.53	0.23
	Ընդամենը 1-5 մասի				**893.2**
	Ամբողջը				**29507.3**
	ԱԱՀ - 20 %				5901.45072
	Ամբողջը				**35408.704**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Արթուր Ստեփանյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Նաիրիթին» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք.Մարտունի փ. Մյասնիկյան տ.115
Հ/Հ 2476603631740000
ՀՎՀՀ 08419076
«Արդշինբանկ» ՓԲԸ Մարտունու մասնաճյուղ

Գործադիր տնօրեն
Սասուն Զաքարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«8» 11 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՀԲ-2019/96 ծածկագրով պայմանագրի

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում /առանց տանիքի/	*Ժամկետի հաշվարկն կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում/ կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած*	70 օր
ԸՆԴԱՄԵՆԸ			70 օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՆաիրիՇին» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք.Մարտունի փ. Մյասնիկյան տ.115
Հ/Հ 2476603631740000
ՀՎՀՀ 08419076
«Արդշինբանկ» ՓԲԸ Մարտունու մասնաճյուղ

Գործադիր տնօրեն
Սասուն Զաքարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«8» 11 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/96 ծածկագրով պայմանագրի
ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներիպլանավորման ատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45211228/506	շինարարական աշխատանքներ մանկապարտեզների համար	. . . %	. . . %	. . . %	. . . %	. . . %	. . . %	. . . %	. . . %	. . . %	. . . %	. . . %	. . . %	... %

** Վճարմանենթակագումարներըներկայացվում են ամբողջականկարգով:*
Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Նաիրիշին» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք.Մարտունի փ. Մյասնիկյան տ.115
Հ/Հ 2476603631740000
ՀՎՀՀ 08419076
«Արդշինբանկ» ՓԲԸ Մարտունու մասնաճյուղ

Գործադիր տնօրեն
Սասուն Զաքարյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելվածթիվ 4
«8» 11 » 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/96 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելուվայրը _____	գտնվելուվայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրիհամարը՝ _____
ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմք ընդունելովպայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարվածաշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«8» 11 2019թ. կնքված
***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/96** ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ_____-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 5
«8» 11 2019 թ. կնքված
ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/96 ծածկագրով պայմանագրի

Գծագրերը կից

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՆաիրիՇին» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք.Մարտունի փ. Մյասնիկյան տ.115
Հ/Հ 2476603631740000
ՀՎՀՀ 08419076
«Արդշինբանկ» ՓԲԸ
Մարտունու մասնաճյուղ

Գործադիր տնօրեն
Սաթուն Զաքարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 6
«8» 11 2019թ. կնքված
***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/96** ծածկագրով պայմանագրի*

Պատվիրատու
«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 90001800123

Կատարող
«ՆաիրիՇին» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք.Մարտունի փ.
Մյասնիկյան տ.115
Հ/Հ 2476603631740000
ՀՎՀՀ 08419076

ԱԿՏ
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »_____20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը **«ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում՝** /առանց տանիքի/» **աշխատանքներ**
Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 2019թ.
Պայմանագրիհամարը՝ ***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/96***

Սույնով Պատվիրատուն և **ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնքը** մի կողմից և Կատարողը, մյուս կողմից, հիմք ընդունելով թիվ ***ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/96*** պայմանագրի **3.2.3** կետի պահանջները, կազմեցին սույն **ԱԿՏ-ը** հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում նախատեսված աշխատանքների կատարման համար Պատվիրատուն, **ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի** հետ համատեղ, հանձնում են, իսկ Կատարողն ընդունում է կողմերի միջև կնքված պայմանագրին կից Նախագծով նախատեսված տարածքը:

Տարածքը հանձնեց	Տարածքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 8
«ՀՄ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/96/97»՝ ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

Ք. Երևան «05» նոյեմբեր 2019 թ.

«Նաիրի Շին» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս.Զաքարյանի (նույնականացման քարտ 006028450, տրված 15.02.2017թ. 043–ի կողմից) որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 *Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի** (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ *ՀՄ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/96/97* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր համաձայնությունը Պահանջագրի ,Վճարման պայմանները դաշտում լրացված ,ակցեպտավորված վճարմանն համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /Վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Նաիրի Շին» ՍՊԸ

Ք. Մարտունի փ.Մյասնիկյան տ.115

Արդշինբանկ Մարտունու մասնաճյուղ

Հ/Հ 2476603631740000

ՀՎՀՀ 08419076

«Նաիրի Շին» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Զաքարյան

05.11.2019թ.

Կ.Տ

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**[40]
2. Թիվ
3. Ներկայացման ամսաթիվը՝ "05" նոյեմբեր 2019թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝ **«Նաիրի Շին» ՍՊԸ**
5. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **Արդշինբանկ Մարտունու մասնաճյուղ**
6. Վճարողի հաշվի համարը՝ **2476603631740000**
7. Վճարողի ՀՎՀՀ՝ **08419076**
8. Վճարողի ՀԾՀ՝
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)
11. Շահառուի ՀՎՀՀ՝ 00846441
12.Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝Կենտրոնական գանձապետարան
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N)900018001231
14.Գումարը (թվերով և բառերով)՝ 2.458.940 (երկու միլիոն չորս հարյուր հիսունութ հազար ինը հարյուր քառասուն)
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ/AMD
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *պայմանագրի կատարման ապահովման համար*
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝
19. Վճարման պայմանները՝ ակցեպտավորված վճարում

[40] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.S. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.S. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.